

Արմեն Յ.Մարտիրոսյան  
*Պատմ. գիտ. թեկնածու*

## ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆՆԳԻՐԸ

Իրավաքաղաքական հիմնավորումների ուրվագիծ\*

### Մուտք

Հայ ժողովուրդը արդեն մի քանի տասնամյակ պայքարում է Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և նրա **հետևանքների հաղթահարման** համար:

Այդ ժամանակամիջոցում ծավալված աշխատանքների արդյունքները հիմնականում դրսևորվել են տարբեր երկրների խորհրդարանների կամ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևերի ընդունման տեսքով: Նման ճանաչումներն ու դատապարտումներն, անշուշտ, չափազանց կարևոր են, քանզի դրանով տարբեր երկրների օրենսդիր մարմիններն ու միջազգային կազմակերպություններն իրենց սկզբունքային դիրքորոշումն են արտահայտել հայերի նկատմամբ 20-րդ դարասկզբին կատարվածի վերաբերյալ՝ այն որակելով իբրև ցեղասպանություն և մատնանշելով տվյալ միջազգային հանցագործության մեջ մեղադրվող պետությանը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան ոչ միայն պատրաստ չէ ընդունել իր մեղքն ու հատուցել, ինչպես դա արեց Գերմանիան՝ հրեական Հոլոքոսթի պարագայում, այլև պետական մակարդակով շարունակում է ժխտել սեփական հանցագործությունը և նույնիսկ գործուն քայլեր է ձեռնարկում Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարբեր խորհրդարաններում ընդունվող բանաձևերը տապալելու նպատակով, ակնհայտ է, որ նման գործելակերպով անհնար է հասնել հարցի հանգուցալուծմանը, այն է՝ **Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը:**

\*Մեր աշխատակցի սույն հրապարակումը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման որոշակի հայեցակարգ մշակելու և Թուրքիայի հանդեպ հայկական պահանջների հիմնական կետերը հստակեցնելու ուշագրավ փորձ է: «Վեմ» հանդեսը, այս հարցի հետ կապված, պատրաստ է տպագրել նաև այլ կարծիքներ և կազմակերպել դրանց քննարկումը: Խմբ.: Հոդվածն ընդունվել է տպագրության 23.05.2012:

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացի մասն ընթացքն ունեցել է օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ, քանզի խորհրդայնացումից հետո Հայաստանը, լինելով ԽՍՀՄ-ի կազմում, ի գորու չէր տվյալ հարցը բարձրացնել միջազգային ատյաններում: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործն իր վրա էր վերցրել Սփյուռքը, որը, չլինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, իր ուժերի ու հնարավորությունների սահմաններում ձգտում էր գոնե հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը կոնկրետ երկրների կողմից:

Մինչև Հայաստանի անկախության հռչակումը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված տվյալ մարտավարությունը եղել է արդարացված և ընդունելի, բայց դրանից հետո այն բավարար չէ միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող պետության և իրավագրված ազգի շահերի պաշտպանության համար: Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման առաջադրանքն այժմ հռչակված է Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը: Սակայն, մեր կարծիքով, նախկին Ժամանակաշրջանից եկող իներցիայով հիմնախնդիրն այսօր էլ թերի է ձևակերպված: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը ինքնապատակ չէ, ճիշտ այնպես, ինչպես ինքնանպատակ չէ ցանկացած հանցագործության փաստի արձանագրումը և հանցագործի դատապարտումը: Տուժածին հասցված վնասի հատուցումը տվյալ գործընթացում ոչ պակաս կարևոր է, քան հանցագործի դատապարտումը: Ուստի այսօր անհրաժեշտ է ձեռքբազատվել նախկին կարծրատիպերից և խնդիրը ձևակերպել որպես Հայոց ցեղասպանության **հետևանքների հաղթահարում**, ինչը ենթադրում է տվյալ հանցագործության թե՛ ճանաչում ու դատապարտում և թե՛ դրա հետևանքով տուժած հայ ժողովրդին հասցված վնասների **հատուցում**:

## 1. Հայոց ցեղասպանության հետևանքների խճանկարը

Ներկայումս, նախքան Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ որևէ քայլ ձեռնարկելը, Հայաստանի և Սփյուռքի համապատասխան կառույցներն ու մասնագետները նախևառաջ՝ պետք է միասնաբար մշակեն «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար Թուրքիային ներկայացվելիք պահանջները հիմնավորող պատմաիրավական փաթեթ-փաստաթուղթ»:

Այս հիմնարար փաստաթղթում հիմնախնդիրը ճիշտ ձևակերպելուց զատ պետք է հստակ պատասխաններ տրվեն այն հարցերին, թե ի՞նչ ենք կոնկրետ հասկանում Հայոց ցեղասպանության **հետևանքներ** ասելով և ինչպե՞ս կամ ի՞նչ չափով ենք պատկերացնում այդ հետևանքների հաղթահարումը կամ **մասնակի վերացումը**, քանզի կան հետևանքներ, որոնք անվերականգնելի են, ուստի խոսք չի կարող լինել դրանց **ամբողջական վերացման** մասին:

Պատճառն այն է, որ մեզանում հաճախ կատարվում է Հայոց ցեղասպանության հասցրած **կորուստների** նույնականացումը այդ հանցագործության **հետևանքների** հետ, մինչդեռ դրանք բոլորովին տարբեր բաներ են: Ի տարբերու-

յուն Հայոց ցեղասպանության կորուստների, այդ հանցագործության հետևանքներն անցյալում չեն մնացել: Արդեն մեկ դար է, ինչ հայ ժողովուրդը Հայաստանում ու Սփյուռքում շարունակում է իր ուսերի վրա կրել դրանց բեռը: Եվ պատահական չէ, որ որոշ հետազոտողներ հակված են այն կարծիքին, որ քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը և չեն հաղթահարվել այդ հանցագործության հետևանքները, գործ ունենք **շարունակվող ցեղասպանության** հետ:

Հայոց ցեղասպանության իրականացման միջոցով հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստներն ըստ առաջնահերթության կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ **ա) հայրենագրկում, բ) մշակութային ժառանգության կորուստ, գ) մարդկային կորուստներ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեկան խեղումներ:**

**Հայրենագրկում.** հայ ժողովրդին իր կենսական տարածքից զրկելը Հայոց ցեղասպանության գլխավոր կորուստն է: Միաժամանակ՝ ցեղասպանության կազմակերպիչների համար այն հանդիսացել է նաև հանցագործություն կատարելու կարևորագույն **շարժառիթը:** Քանի որ խոսքը հայրենիքի մեծ մասի կորստի մասին է, ուստի պետք է հստակեցնել, թե դա ինչ հետևանքներ է ունեցել և ինչպես է անդրադարձել մեր ժողովրդի հետագա կենսագործունեության ու զարգացման վրա:

Մի կողմից՝ հայրենիքի կորստի հետևանք պետք է համարել Սփյուռքի գոյավորումը, քանզի այդ գործընթացում ցեղասպանությունից հրաշքով փրկված արևմտահայերը, կորցնելով իրենց հայրենի օջախները, ստիպված էին հայրենիքից դուրս ամեն ինչ սկսել գրոյից, օտար միջավայրում անցնելով համակերպման դժվարին ճանապարհը: Մյուս կողմից՝ հայրենիքի մեծ մասի կորուստը և արևմտահայության ողջ մնացած հատվածի դուրս մղումը Արևմտյան Հայաստանից երկփեղկել է հայ ժողովրդին, խաթարել է նրա միասնականությունը, ջլատել ուժերը և կասեցրել բնականոն զարգացման հեռանկարները: Յեղասպանության հետևանքով աշխարհագրորեն միմյանցից հեռացվել են հայ ժողովրդի երկու հիմնական հատվածները, ինչը լուրջ խզում է առաջացրել նրանց միջև: Արդյունքում՝ արևմտահայերը դարձել են **սփյուռքահայեր**, իսկ արևելահայերն ու արևմտահայ գաղթականության Արևելյան Հայաստանում հաստատված հատվածը՝ **հայաստանցիներ:** Ապրելով տարբեր վարչակարգերի պայմաններում՝ ժամանակի ընթացքում նրանք ձեռք են բերել միմյանցից տարբերվող մտածողություն, ինչն էականորեն բարդացնում է համահայկական հարցերի լուծման գործընթացը:

**Մշակութային ժառանգության կորուստ.** Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցվել են վիթխարի մշակութային կորուստներ: 1914 թ. թուրքական-պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 հայկական եկեղեցիներ ու մատուռներ, 451 վանքեր և շուրջ 2000 վարժարաններ<sup>1</sup>: ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների համաձայն՝ Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թ. հետո կանգուն է մնացել 913 շինություն, որոնցից հետագա տարիների ընթացքում 464-ը լիովին ոչնչացվել է, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ունի<sup>2</sup>: Ակնհայտ է, որ նույն ճակատագրին են արժանացել նաև հայկական

1 Տե՛ս **Աստույան Ա.**, Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ. վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Կեմ», Եր., 2010, թիվ 3 (31), հավելված, էջ XVI-XVII:

2 Տե՛ս Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական խումբ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011, էջ 144:

առաջնորդարաններն ու վարժարանները: Պետք է նշել, որ երբ խոսում ենք «**շարունակվող ցեղասպանության**» մասին, նկատի ունենք նաև Թուրքիայի կողմից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի՝ պետականորեն շարունակվող ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնել այն ամենը, ինչն ապացուցում կամ վկայում է այդ տարածքի իրական տիրոջ՝ հայերի մասին:

Մշակութային ժառանգության կորուստ ասելով, սակայն, չպետք է սահմանափակվել միայն պատմաճարտարապետական կառույցների ոչնչացումով: «Գեոցիոլ» եզրի և ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի հեղինակներից մեկը՝ Ռաֆայել Լեմկինը, դեռևս 1933 թ. Մադրիդում կայացած միջազգային քրեական իրավունքի կանոնակարգման հինգերորդ կոնֆերանսում ունեցած իր հատուկ գեկույցում առաջին անգամ բավականին հստակորեն տվել է **ազգային-մշակութային ցեղասպանության** սահմանումը: Մանրամասն ներկայացնելով Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային ոչնչացումը, Լեմկինը դա անվանում էր «**անանուն հանցագործություն**» և դրա դրսևորումներից էր համարում նաև «վանդալիզմի այն գործողությունները, որոնք ուղղված են ազգային, կրոնական, ռասայական կամ էթնիկ խմբի մշակութային արժեքների ոչնչացմանը՝ **մայրենի լեզուն արգելելու, տպագիր գրքերի, դպրոցների, պատմական հուշարձանների, պաշտամունքային օջախների ոչնչացման կամ դրանցից օգտվելու արգելքի միջոցով**( ընդգծումը մերն է - Ա.Մ.)»<sup>3</sup>:

Ուրեմն՝ հայերի նկատմամբ մշակութային եղեռնի դրսևորում պետք է համարել նաև հազարավոր **հայկական ձեռագրերի ոչնչացումը**, որոնցում ամփոփված էին հայ ժողովրդի հազարամյա գիտական միտքն ու հանճարը: Այդպիսով ցեղասպանության կազմակերպիչները մեզ մասնակիորեն կտրել են մեր նախնիների մտքից ու ոգուց, այն անգին գիտելիքներից, որոնք նրանք մեզ փորձում էին փոխանցել այդ ձեռագրերի միջոցով<sup>4</sup>: Մշակութային ցեղասպանության այս հետևանքները չեն կարող վերականգնվել որևէ նյութական փոխհատուցմամբ:

**Մարդկային կորուստները** Հայոց ցեղասպանության ընթացքում կազմեցին շուրջ 1,5 միլիոն մարդ: Սակայն, մարդկային կորուստների թիվը հստակեցնելիս, անպայմանորեն պետք է հաշվի առնվի նաև ցեղասպանության քաղաքականության ընթացքում իսլամացած հայերի թիվը, որոնք ցեղասպանության գոհ-ժողովրդի համար նույնպես մարդկային կորուստ են, քանզի ուծացման գործընթացի հետևանքով նրանք դադարել են իրենց հայ համարել:

Մարդկային կորուստների թվի հստակեցումից հետո անհրաժեշտ է պարզել, թե այդ կորուստները ի՞նչ հետևանքներ են ունեցել և ինչպե՞ս են անդրադարձել հայ ժողովրդի հետագա վերարտադրման վրա, և որքան կկազմեր հայերի թիվն այսօր՝ հանցագործությունից մոտ մեկ դար անց, եթե հանցագործության զոհերը ողջ լինեին: Այս առումով պետք է հաշվի առնել այն, որ արևմտահայերի ընտանիքները, որպես կանոն, բազմազավակ էին: Բացի այդ, հայտնի է, որ 25 տարին մեկ կատարվում է բնակչության վերարտադրություն (ռեզեներացիա), այսինքն՝ անցած մեկ դարի ընթացքում առնվազն չորս անգամ պետք է կատարվեր սպան-

3 Барсегов Ю. Геноцид армян – преступление по международному праву, М., 2000, с. 7.  
4 Տե՛ս Ստրатегические последствия геноцида армян, “Византийское наследство”, информационно-аналитический журнал, Ер., 2002, N 3, с.15.

ված արևմտահայերի վերարտադրությունը, եթե նրանք ողջ մնային:

Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հետ կապված՝ հիմնականում հիշատակվում է 1919 թ. Փարիզի Խաղաղության վեհաժողովին Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ Ազգային պատվիրակության ներկայացրած հուշագիրը, որի համաձայն 1915-1919 թթ. հայերի ունեցած նյութական կորուստները հաշվվում են **19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ, որից 14.598.460.000-ը բաժին է ընկնում արևմտահայությանը, իսկ 4.532.472.000-ը՝ Հայաստանի Հանրապետությանը**<sup>5</sup>: Սակայն հաշվի առնելով այն, թե ինչ պայմաններում է կազմվել ու վեհաժողովին ներկայացվել այդ փաստաթուղթը, ակնհայտ է դառնում, որ նշված թիվը ամեննախնայելի չի կարող մեկնակետ համարվել:

Բանն այն է, որ Փարիզի վեհաժողովին կից գործում էր «Փոխհատուցումների հանձնաժողովը», որը զբաղվում էր պարտավածների կողմից հաղթողներին տրվելիք ռազմատուգանքների չափերի հստակեցումով: Քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ պարտաված տերությունները պետք է փոխհատուցումներ վճարեն նաև այլ երկրներին՝ պատերազմի արդյունքում նրանց հասցված վնասների դիմաց: 1919 թ. մարտի 7-ին հանձնաժողովին կից ստեղծվում է «Հատուկ հանձնախումբ», որն էլ մարտի 8-ին դիմում է մի շարք երկրների, այդ թվում՝ Հայաստանին, նյութական վնասների հաշվարկ ներկայացնելու հարցով: Հանձնախումբը ներկայացված հաշվարկները ամփոփում է 1919 թ. ապրիլի 14-ին<sup>6</sup>: Այսինքն՝ Ազգային պատվիրակությունը այդ լուրջ և պատասխանատու աշխատանքի համար ունեցել է **ոչ ավել քան մեկ ամիս ժամանակ**, որի ընթացքում ուղղակի անհնար էր ամբողջական տվյալներ հավաքել և դրանք համակողմանիորեն համակարգել: Ակնհայտ է, որ նման սեղմ ժամկետում կատարված հաշվարկները չեն կարող համարվել վերջնական ու անթերի, ուստի նշված փաստաթղթի տվյալները պետք է ճշգրտվեն՝ հաշվի առնելով որոշ իրողություններ:

Մասնավորապես, Ազգային պատվիրակության հուշագրում ամբողջական կերպով չի ներկայացվել արևմտահայության ազգային սեփականության՝ առաջնորդարանների, հայկական եկեղեցիների և մատուռների, վանքերի, վարժարանների, դպրեվանքերի և որբանոցների ողջ ունեցվածքը՝ իրենց կալվածքներով, կահկարասիով և այլն: Բացի այդ, պատվիրակության տեղեկագրում չեն ներկայացված հայ կաթոլիկների և բողոքականների նյութական կորուստները: Օրինակի համար՝ կայսրությունում հայ բողոքականներն ունեին 310 ժողովարան, որոնց բացարձակ մեծամասնությունը հիմնահատակ կործանվել է<sup>7</sup>:

Պողոս Նուբարի հուշագրում չեն հաշվառվել այն նյութական վնասները, որոնք թուրք-ադրբեջանական զորքերի կողմից հասցվել են Բաքվի հայությանը 1918 թ. և քնականաբար չէին կարող նաև հաշվառվել փաստաթուղթը ներկայացնելուց հետո արդեն՝ քենալականների կողմից 1920 թ. արևելահայությանը, 1921 թ. կիլիկիահայությանը և 1922 թ. Չմյուռնիայի հայությանը հասցված նյութական վնասները<sup>8</sup>: Ուստի որոշ հեղինակների կարծիքով՝ ցեղասպանության շարու-

5 Տե՛ս «Ցեղապանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները», կազմող՝ **Լ.Բարսեղյան**, Եր., 1999, էջ 13:

6 Տե՛ս **Պապյան Ա.**, Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հողվածների ժողովածու), Եր., 2007, էջ 42:

7 Տե՛ս **Աստույան Ա.**, նշվ. աշխ., էջ XXVI:

8 Տե՛ս **Բարսեղով Յու.**, Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999, էջ 11:

նակման արդյունքում հայերին հասցված նյութական վնասի նշված թիվը պետք է ավելանա առնվազն 20%-ի չափով<sup>9</sup>:

Պողոս Նուբարի հուշագիրը շատ հպանցիկ է անդրադարձել հայերի բանկային ավանդներին, մինչդեռ հետագայում բացահայտվել են այդ ավանդների չափերն ու դրանց բռնագրավման մեխանիզմները: Ֆրիտյոֆ Նանսենի «Խաբված ժողովուրդ» գրքում առկա է Մեծ Բրիտանիայի պահպանողականների և լիբերալների պարագլուխներ Սթենլի Բուրլիմի և Հերբերտ Ասկվիտի կողմից իշխող լեյբորիստական կուսակցությունը ներկայացնող վարչապետ Ռամզեյ Մակդոնալդին 1924 թ. սեպտեմբերին հղված դիմումը: Նրանում բրիտանական կառավարությունը մեղադրվում էր 1915 թ. հայերի կոտորածից ու արտաքսումից հետո նրանց մոտ 5 մլն. ֆունտ ստերլինգ (թուրքական ոսկով) հարստությանը տիրանալու մեջ: Հայերի զանգվածային սպանություններից ու բռնի տեղահանությունից հետո Օսմանյան բանկում արևմտահայերի ընթացիկ և ավանդային բանկային հաշիվները թուրքական կառավարության հրամանով փոխանցվեցին Կ.Պոլիս՝ պետական զանձատուն, իսկ 1916 թ. կառավարությունը այդ գումարից 5 միլիոն ֆունտ ստերլինգ ուղարկեց Բեռլին՝ Գերմանիայի կայսերական բանկ (Reichsbank)՝ նոր արժեթղթերի թողարկման նպատակով<sup>10</sup>: 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ երիտթուրքական իշխանությունները թողարկեցին 19 մլն. օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր<sup>11</sup>: Դժվար չէ նկատել կապը բաց թողնված արժեթղթերի և Գերմանիայի կայսերական բանկում դեպոզիտացված ոսկու միջև: Անգլիական դիվանագիտական փաստաթղթերից պարզ է դառնում, սակայն, որ նշված գումարը Գերմանիան Օսմանյան կայսրությունից բռնագանձել էր իբր՝ օսմանյան պարտքի դիմաց, իսկ Մեծ Բրիտանիան այդ գումարը բռնագրավեց Բեռլինից՝ իբրև ռազմատուգանք<sup>12</sup>: Ի դեպ, Գերմանիայի կայսերական բանկում դեպոզիտացված այս 30 000 կգ ոսկու հարցը առաջին անգամ բարձրացվել է 1984 թ. Տիգրան Քոչումյանի կողմից՝ Ժողովուրդների Մշտական տրիբունալում Հայոց ցեղասպանության հարցը քննարկելու ժամանակ, երբ տրիբունալին հանձնվեց «Հայոց սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» վերնագրով զեկույցը<sup>13</sup>: Կարծում ենք՝ մնանօրինակ և այլ ավանդները նույնպես պետք է հաշվարկվեն՝ հայերի ունեցած նյութական կուրստերի թիվը հստակեցնելիս:

Որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմվի, թե ինչ տնտեսական օգուտներ է քաղել թուրքական պետությունը հայերի զանգվածային կոտորածներից ու տեղահանությունից, բավական է նշել, որ հակառակ պատերազմական ծանր պայմաններին և կայսրության տնտեսության կաթվածահար վիճակին, երկրի պետական բյուջեն արձանագրեց աննախադեպ աճ: Այսպես՝ եթե 1913-1914 թթ.

9 Տե՛ս **Դադայան Խ.**, Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը. ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008թ., «Գիտական զեկույցների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 180:

10 Տե՛ս **Արզումանյան Մ.Վ.**, Նանսենը և Հայաստանը, Եր., 1986, էջ 128-129:

11 Տե՛ս **Չովհաննիսյան Ա.**, Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը, «Վեմ», Եր., 2011, թիվ 1 (33), էջ 172:

12 Տե՛ս **Սարուխանյան Տ.**, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918), Եր., 2005, էջ 90-91:

13 Տե՛ս **Չովհաննիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 169:

այն կազմում էր 35 մլն. օսմ. ոսկի, ապա 1915-1916 թթ.՝ 38 մլն., իսկ 1917-1918 թթ.՝ 85 մլն<sup>14</sup>: Ակնհայտ է, որ այս պայմաններում թուրքական բյուջեի նման աճը կարող էր ապահովվել միայն հայերի գույքի և ունեցվածքի բռնագրավման հաշվին: Այստեղ տեղին է արձանագրել դատապարտելի այն փաստը, որ թուրքական պետությունը փաստորեն օգտվում էր իր իսկ կողմից կազմակերպված ու իրագործված հանցագործության՝ Հայոց ցեղասպանության «պտուղներից», ինչը նույնպես պետք է համարել հանցագործություն:

Պողոս Նուբարի հուշագիրը պետք է ճշգրտվի նաև՝ ըստ Հոլոքոստի հետևանքով Գերմանիայի կողմից հրեաներին հասցված վնասների հատուցման փաստաթղթերի, որոնք, մեր կարծիքով, նախադեպ ու հիմք կարող են հանդիսանալ Հայոց ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասները հաշվարկելու գործընթացում: Ըստ 1952 թ. սեպտեմբերի 10-ին կնքված Լյուքսեմբուրգյան համաձայնագրի՝ գումարները Իսրայելին պետք է վճարվեին ոչ միայն որպես հատուցում Հոլոքոստի տարիներին հրեաների նկատմամբ կիրառված հալածանքների, հետապնդումների, այլև նացիստների գողացած կամ թալանած հրեական սեփականության և նրանց ստրկական աշխատանքի համար<sup>15</sup>: Եթե հրեաները ստրկական աշխատանքներ են կատարել համակենտրոնացման ճամբարներում, ապա երիտթուրքերը ստիպել են շատ հայ արհեստավորներին և մանավանդ՝ օսմանյան բանակ զորակոչված հայերին անվճար կատարել ինժեներաշինարարական (կառուցել կամուրջներ, ճանապարհներ, փորել խրամատներ) և այլ բնույթի աշխատանքներ: Այս ծանր աշխատանքների դիմաց «վճարը» նրանց առժամանակ կենդանի թողնել էր: Ուստի պետք է հաշվարկվեն նաև տվյալ աշխատանքների համար չվճարված գումարները:

1951 թ. Իսրայելի արտաքին գործերի նախարար Մ.Շարեթը Գերմանիայից պահանջել էր Իսրայելում վերաբնակեցված, ցեղասպանությունից փրկված 500 000 հրեաների արտոբացիայի համար վճարել 1,5 մլրդ., այսինքն՝ **յուրաքանչյուրի համար 3000-ական դոլար**<sup>16</sup>: Ազգային պատվիրակության ներկայացրած հուշագրում նույնպես անդրադարձ է կատարվել այս հարցին, սակայն նախատեսված է արտոբացի վերապրած և արտասահմանում ապաստանած յուրաքանչյուր **հայ ընտանիքին, այլ ոչ թե անհատին, հատուցել 1919 թ. համարժեքով 4000 ֆրանսիական ֆրանկի** չափով<sup>17</sup>: Նշենք նաև, որ ի տարբերություն հայերի, հրեաներին գումարը տրվում էր հրեական պետությունում արտոբացիայի համար, մինչդեռ արևմտահայերը դժվարին արտոբացիայի գործընթաց են անցել օտար պետություններում՝ բացարձակապես ոչինչ չստանալով դրա դիմաց: Այնպես որ այս խնդիրը նույնպես պետք է հաշվառվի նյութական վնասի մեջ:

Բացի դրանից՝ նման հաշվարկներ կատարելիս պետք է անպայմանորեն հաշվի առնել Թուրքիայի կողմից Լոզանի պայմանագրի դրույթները կոպտորեն խախտելու միջոցով հայկական համայնքի կալվածքների ապօրինի բռնագրավման հանգամանքը<sup>18</sup>: Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի զանգվածային ունեզրկումը կանխեց այդ նյութական հարստության բազմապատկման հնա-

14 Տե՛ս Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ XXIX:

15 Տե՛ս Մարուքյան Դ., Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, զործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», էջ 83:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 81:

17 Տե՛ս Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, էջ 9:

18 Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պեյրուս 1976, էջ 138:

րավորությունը: Յեղասպանությունից հրաշքով փրկված տասնյակ հազարավոր հայեր, կորցնելով իրենց ունեցվածքը, ստիպված էին արտասահմանում ամեն ինչ սկսել գրոյից՝ կրելով անասելի սոցիալ-տնտեսական գրկանքներ: Այդ իսկ պատճառով, Հայոց ցեղասպանության նյութական հետևանքները հաշվարկելիս չպետք է մոռանալ նաև բաց թողնված շահույթի մասին: Նյութական կորուստների հետևանքների հետ կապված՝ պետք է հաշվարկվեն նաև անցած տասնամյակների ընթացքում այդ գումարի վրա ավելացած թե՛ սղաճը և թե՛ բանկային տոկոսները, որով միայն կամբողջականացվի հայերին հասցված նյութական կորուստների վերջնական թիվը:

**Հոգեկան խեղումները.** Հայոց ցեղասպանության հետևանքով հասցված հոգեբանական սթրեսները նույնպես անհետևանք չեն մնացել և անդրադարձել են հայ ժողովրդի հետագա կենսագործունեության վրա: Հարցի այս կողմը թերևս պակաս կարևոր չէ, քան վերը թվարկվածները: Յեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ հոգեբանական բարդություներ ու վախեր, որոնք ուղղակի և անուղղակի կերպով ազդել ու շարունակում են ազդել ոչ միայն Եղեռնը անմիջականորեն վերապրածների, այլ նաև հաջորդ սերունդների վրա: Ընդ որում, խոսքը ոչ միայն ցեղասպանությունից անմիջականորեն վերապրածների ու նրանց սերունդների, այլև ողջ հայ ժողովրդի մասին է, որի մոտ առաջացել են թերարժեքության բարդություներ: Չի վերացել այն վախը, որ կատարվածը մի օր կարող է կրկնվել, քանի դեռ մեղավոր կողմը ոչ միայն չի ընդունել իր մեղքը և չի ապաշխարել, այլև շարունակում է ժխտել պատմական իրողությունը: Իր հայրենիքի մեծագույն մասը կորցնելով՝ հայ ժողովուրդը գրկվել է սեփական կենսատարածքի և նախնիների կերտած ազգային արժեքների հետ շփվելու հնարավորությունից: Դրա հետևանքով առաջացած թերարժեքության բարդություններից մեկն էլ պետք է համարել այն, որ ոմանց մոտ առաջացել է թերահավատություն ու անվստահություն ազգի ապագայի, սեփական ուժերի ու կարողությունների հանդեպ և օտար արժեքներին ապավինելու հակում<sup>19</sup>: Ուստի հայ ժողովրդի մոտ **գարգացման ու առաջադիմության** ձգտումների փոխարեն Մփյուռքում ու Հայաստանում տասնամյակներ շարունակ տիրապետել և այսօր էլ մասամբ իշխում են **գոյատևման** փիլիսոփայությունն ու հոգեբանությունը:

Հոգեբանական լուրջ հարված է հասցվել նաև ցեղասպանության ընթացքում բռնի մահմեղականացված հայերին, որոնք մահվան սպառնալիքի տակ ստիպված հրաժարվել են իրենց ազգային պատկանելությունից և ընդունել օտարի կրոնն ու հատկանիշները: Տասնամյակներ շարունակ նրանք Թուրքիայում ապրել ու ապրում են վախի մթնոլորտում՝ ստիպված թաքցնելով իրենց իրական ինքնությունը<sup>20</sup>: Ներկայումս այսպես կոչված՝ «թաքուն հայերի» շրջանում դրական միտում է նկատվում, քանզի նրանցից ոմանք արդեն խոսում են իրենց հայկական արմատների մասին և նույնիսկ փորձում են վերադառնալ քրիստոնեական կրոնին, սակայն պետք է խոստովանել, որ դա կատարվում է լուրջ հոգեբանական բարդություները, առաջին հերթին՝ վախը դժվարությամբ հաղթահարելու ճանապարհով:

Թուրքիայի Հանրապետության կողմից ներկայումս պետականորեն իրակա-

19 Տե՛ս Стратегические последствия геноцида армян, “Византийское наследство”, информационно-аналитический журнал, с.16.  
20 Տե՛ս Այլախոս և այլադավան հայեր, Եր., 2007:



նացվող՝ Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը կասկածի տակ է դնում կատարված հանցագործությունը և այդպիսով՝ անարգում է անմեղ նահատակների հիշատակը, վիրավորում ոչ միայն նրանց ժառանգների, այլև ողջ հայ ժողովրդի արժանապատվությունը: Ուստի տվյալ քաղաքականությունը պետք է դիտարկել իբրև ցեղասպանության գոհ դարձած հայ ժողովրդին հասցվող լրացուցիչ հոգեբանական հարված: Համաձայն այդ քաղաքականության տրամաբանության՝ հայ ժողովուրդը պետք է, ըստ էության, զբաղվի **մազդխիզմով** և, կրկին վերապրելով դաժան իրողությունները, ապացուցի այն պատմական ճշմարտությունը, որն անհերքելի է բոլորի համար, բացառությամբ թերևս՝ Թուրքիայի ու նրա սատելիտ Ադրբեջանի: Այդ իսկ պատճառով նման քաղաքականությունը պետք է գնահատվի իբրև Հայոց ցեղասպանության քաղաքականության շարունակություն՝ արդեն տեղեկատվական դաշտում:

## 2. Թուրքիային ներկայացվելիք պահանջների ուրվագիծ

Հայոց ցեղասպանության հետևանքները հստակեցնելուց հետո պետք է իրավական տեսակետից հիմնավորվեն դրանց հաղթահարման նպատակով Թուրքիային ներկայացվելիք պահանջները:

Գլխավոր հետևանքի՝ **հայրենագրկման** հաղթահարման պահանջը ավելի խելամիտ ու իրատեսական է ամփոփել այն սահմաններով, որոնք ամրագրված են ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի՝ 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճռով<sup>21</sup>, ինչն ընդունվել է ցեղասպանության իրականացման պահին գործող միջազգային իրավական նորմերի, մասնավորապես՝ 1907 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային բախումների խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի համաձայն: Այս փաստաթուղթը կողմերի միջև վեճի կարգավորման եղանակ էր համարում միջազգային իրավարարությունը (արբիտրաժը): Ուստի՝ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը իրավացիորեն դիտարկվում է իբրև քաղաքական պատասխանատվություն հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության համար<sup>22</sup>:

Ազգային-մշակութային ցեղասպանության դրույթը ներկայացված է եղել ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագծում, սակայն որոշ երկրների հակազդեցության հետևանքով այն դուրս է մղվել, ուստի բացակայում է փաստաթղթի տեքստից: Նման դրույթի ընդունումով կարելի էր պատասխանատվության կանչել մշակութային արժեքները ոչնչացնողներին: Սակայն վերջինիս բացակայությունը չի նշանակում, որ նույն նպատակին չի կարելի հասնել այլ փաստաթղթերի միջոցով: Օրինակ՝ Հայոց ցեղասպանության արդյունքում մշակութային ժառանգության կորուստների վերականգնման պահանջը կարող է հիմնավորվել 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի՝ ոչ մահմեդականների իրավունքների պաշտ-

21 Խոսքը չի վերաբերում 1878-1918-1920 թթ. սկզբում Ռուսաստանյան կայսրության, իսկ հետո Գայաստանի Դանրապետության անբաժան մասը կազմող Կարսի մարզին, Բաթումի մարզի հարավային հատվածին և Սուրմալուի գավառին, որոնք միացվել են Թուրքիային Մոսկվայի ու Կարսի անօրինական պայմանագրերով:

22 Տե՛ս **Մարության Ա.**, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճիռը քաղաքական ու միջազգային իրավական նշանակությունը, «Մեծ եղեռն. դատապարտումից հատուցում» (հոդվածների ժողովածու), Եր., 2011, էջ 97:

պանությանը վերաբերող 37-44-րդ հոդվածներով: Մասնավորապես պայմանագրի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ թուրքական կառավարությունը պարտավորվել է լիակատար պահպանության տակ առնել եկեղեցիները, սինագոգները, գերեզմանները և փոքրամասնությունների այլ կրոնական հաստատությունները: «Լիակատար պահպանության» տակ պետք է հասկանալ ոչ միայն եկեղեցիները չքանդելն ու չավերելը, այլև դրանց ամրացումն ու նորոգումը<sup>23</sup>: Բացի դրանից Թուրքիայում առկա հայկական մշակութային ժառանգության հարցը կարող է պաշտպանվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրության դրույթներով, քանի որ թե՛ Հաստատանը և թե՛ Թուրքիան այդ կազմակերպության անդամ-երկրներ են:

Միջազգային իրավունքն, անշուշտ, նախատեսում է պատասխանատվություն նաև նյութական վնասները վերականգնելու իմաստով: Հատուցման համընդգրկուն ձևը, ինչպես հայտնի է, **կոմպենսացիան** է, սակայն կա նաև **ռեստիտուցիայի** ինստիտուտը, որը ենթադրում է նյութական արժեքների նախկին վիճակի վերականգնում, այդ թվում՝ բնեղենով: Ռեստորացիան նախատեսում է, որ պետք է վերականգնվեն այն բոլոր իրավունքները, որով օժտված են եղել հանցագործության զոհ-խմբի անդամները՝ մինչև դրա կատարումը: Այսինքն՝ միջազգային իրավունքը նախատեսում է ոչ միայն Հայոց ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասի հատուցում, այլև նրանց իրավունքների վերականգնում այն գույքի և ունեցվածքի նկատմամբ, որոնք հանիրավի բռնագավթվել են տվյալ հանցագործության հետևանքով:

Գոյություն ունի թյուր կարծիք, թե իբր՝ որոշ ապահովագրական կազմակերպությունների, օրինակ՝ “New York Life Insurance Company”-ի կողմից Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներին տրված գումարների վերադարձը նյութական հատուցում է այդ հանցագործության դիմաց: **Ապահովագրական վճարների տրամադրումը, այսինքն՝ Օսմանյան կայսրությունում իրենց կյանքն ապահովագրած ցեղասպանության զոհերի պահ տրված ապահովագրական գումարների վերադարձը ընդամենը լրացուցիչ կերպով վերահաստատում է Հայոց ցեղասպանության եղելությունը, բայց դա ոչ մի կերպ չի կարող դիտվել որպես հատուցում տվյալ հանցագործության դիմաց:** Դրանք ընդամենը ապահովագրական կազմակերպության կողմից իր հաճախորդների նկատմամբ ուշացումով կատարվող պարտավորություններ են<sup>24</sup>:

Վերջապես՝ Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման համար փայլուն նախադեպ կարող է հանդիսանալ 1952 թ. սեպտեմբերի 10-ի Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության և Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների կոնֆերանսի կամ կրճատ՝ **Պահանջների կոնֆերանսի** միջև կնքված **Լյուքսեմբուրգյան համաձայնագիրը**, որով Գերմանիան սկսեց հրեական Հոլոքոստի նյութական վնասների հատուցումը:

Հայոց ցեղասպանության հոգեբանական կամ բարոյական հետևանքների վերականգնման տեսակետից միջազգային իրավունքում կիրառելի է **սատիսֆակցիան**, որը կարող է արտահայտվել խախտման ճանաչման, ափսոսանքի արտահայտման, պաշտոնական ներողության կամ այլ պատշաճ ձևերով: Այս առումով սատիսֆակցիայի կարևոր դրսևորում կարող է համարվել նախևառաջ՝ Թուրքիայի կողմից պետականորեն վարվող ժխտողական քաղաքականության

23 Տե՛ս **Պապյան Ա.**, Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը, էջ 48:  
24 Տե՛ս Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, էջ 81:

դադարեցումը:

Ի դեպ, Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը շատ է հիշեցնում նրա իրավանախորդի՝ Օսմանյան կայսրության քաղաքականությունը, երբ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ընթացած բանակցություններում թուրքական կողմը, խեղաթյուրելով իրողությունները, պնդում էր, թե հայերի զանգվածային կոտորածներն իրականացվել են ոչ թե իշխանությունների կամ թուրքերի, այլ քրդերի ու չերքեզների կողմից: Թեև Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերի համապատասխանաբար՝ 16-րդ ու 61-րդ հոդվածներում հիմք ընդունվեց այդ տեսակետը, բայց, այդուհանդերձ, դա Օսմանյան կայսրությանը չփրկեց մեծ տերությունների հումանիտար ինտերվենցիայից ու նրա ներքին գործերին միջամտելուց: Ուրեմն՝ ժամանակակից Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը նույնպես չի կարող խուսափել որոշ եվրոպական երկրներում արդեն սկիզբ առած՝ ցեղասպանության հանցագործության ժխտումը քրեականացնող օրենսդրության նախատեսած պատիժներից:

### 3. Պահանջների առաջադրման ու հետապնդման մեթոդաբանությունը

Հայ իրավական միտքը մինչև վերջերս բավարարվում էր միայն Հայոց ցեղասպանությանը իրավական գնահատական տալով, սակայն վերջին ժամանակներս այդ հիմնահարցը տեսականից տեղափոխվել է գործնական հարթություն: Մփյուռքում և Հայաստանում կատարվում են ուսումնասիրություններ, որոնցում փորձ է արվում վեր հանել ժամանակակից միջազգային իրավունքի այն գործնական հնարավորությունները, որոնք թույլ կտան ցեղասպանության գոհ հանդիսացող հայ ժողովրդին՝ հասնել այդ հանցագործության դատապարտմանը և հետևանքների հաղթահարմանը:

Եղած ձեռքբերումները, սակայն, դեռևս չի կարելի համարել բավարար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային իրավունքը մեծապես հենվում է նախադեպերի վրա, որոնք զգալի դեր են կատարում իրավունքի տեսությունը հարստացնելու և նոր իրավական նորմեր ձևավորելու գործում, նպատակահարմար է ուսումնասիրել այլ ժողովուրդների նկատմամբ կատարված ցեղասպանությունների դատապարտման գործընթացները, փորձելով դրանք դիտարկել իբրև նախադեպեր Հայոց ցեղասպանության դատապարտման ու հատուցման գործընթացի համար: Խոսքը մասնավորապես հրեաների, Ռուսնոսթայի, Բոսնիա-Հերցեգովինայի ցեղասպանությունների դատապարտման մասին է: Դրանք միջազգային իրավունքի տեսակետից կարող են գործնական-կիրառական նշանակություն ունենալ և հիմք դառնալ Հայոց ցեղասպանության դատապարտման համար: Հայոց ցեղասպանությանը վերաբերող որոշ մասնավոր դատավարությունների, օրինակ՝ երիտթուրքերի դատավարության և Սողոմոն Թեյլիբյանի, ինչպես նաև Իսրայելում դատապարտված մացիստական հանցագործ Էլյամանի դատական գործերի նյութերը նույնպես կարող են օգտակար լինել Թուրքիայի դեմ միջազգային ատյաններում դատական գործը կազմելիս:

Բացի դրանից, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման առումով կարևոր նշանակություն ունի նաև Օսմանյան կայսրության և նրա իրա-

վահաջորդ Թուրքիայի Հանրապետության կնքած երկկողմ ու բազակողմ պայմանագրերով ստանձնած պարտավորությունների ուսումնասիրումը: Ի դեպ, այս հարցում հիմնականում ստիպված ենք արձանագրել, որ ի դեմս Թուրքիայի՝ գործունենք մի պետության հետ, որը տարբեր պայմանագրերով ստանձնում է պարտավորություններ և չի կատարում դրանք, եթե խոսքը վերաբերում է հայերին կամ Հայաստանին: Միջազգային կոնվենցիաների դրույթների ուսումնասիրումն ու դրանց ընձեռած հնարավորությունների վերհանումը լրացուցիչ գործոն կարող է դիտվել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման տեսակետից:

Այս առումով Թուրքիային ներկայացվելիք պահանջները հիմնավորելիս անհրաժեշտ կլինի հստակորեն պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

1. «Գենոցիդ» եզրի չգոյության պայմաններում Հայոց ցեղասպանության կատարման պահին դրա միջազգային հանցագործություն համարվելը,
2. Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի 1948 թ. «Յեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի կիրառելիությունը,
3. Թուրքիայի Հանրապետության՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելու փաստը,
4. Հայաստանի Հանրապետության՝ ժամանակակից Թուրքիային միջազգային-իրավական պահանջներ ներկայացնելու իրավասությունը և այլն:

1. **Պետք է նշել, որ անկախ ավելի ուշ կիրառված «գենոցիդ» հասկացությունից, Հայոց ցեղասպանությունը իր կատարման պահին ևս համարվել է նույնաբովանդակ, ուրեմն նաև՝ նույն պատիժը ենթադրող հանցագործություն, որի համար պատասխանատվություն է սահմանված եղել դեռևս 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին գործող միջազգային իրավական նորմերով:** Սա չափազանց կարևոր դրույթ է, քանզի, եթե հնարավոր է հիմնավորել, որ հայերի զանգվածային սպանությունները տվյալ հանցագործության կատարման պահին միջազգային իրավունքի կողմից համարվել են հանցագործություն, ապա դրանից միանշանակորեն բխում է, որ անկախ հանցագործության անվանումից և նրա կատարման ժամանակից, միջազգային իրավունքը, որը խարսխվում է նախադեպերի վրա, նախկինում կատարված իդենտիկ (նույնական) հանցագործությունը նույնպես պետք է դիտարկի որպես այդպիսին: Այս դրույթի հիմնավորումը կարևոր է նաև նրանով, որ եթե անգամ ինչ-որ պատճառներից ելնելով՝ չհաջողվի ապահովել ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Յեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի հետադարձ ուժի կիրառումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, ապա այդ հանցագործությունը միանշանակ կարող է հիմնավորվել ու դատասպարտվել 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարասկզբին գործող միջազգային սովորութային իրավունքի նորմերի ու սկզբունքների հիման վրա:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ազգային ու կրոնական փոքրամասնությունների իրավունքները մշտապես խախտող Օսմանյան կայսրության նկատմամբ եվրոպական տերությունները, տվյալ հիմնահարցերի հետ կապված, բազմիցս իրականացրել են մարդասիրական միջամտություններ (հումանիտար ինտերվենցիաներ)՝ սուլթանին պարտադրելով որոշակի քայլեր կատարել այդ ուղղությամբ: Դրանցից կարելի է հիշատակել

Լիբանանի քրիստոնյա մարոնիտներին մահմեդական դրուզներից պաշտպանելու նպատակով 1860 թ. օգոստոսի 3-ին ստորագրված Փարիզի արձանագրությունը և 1861 թ. հունիսի 9-ին ընդունված որոշումը, որը նախատեսեց Լիբանանի համար քրիստոնյա գլխավոր-մահանգապետ<sup>25</sup>: Այնուհետև մարդասիրական միջամտություններ իրականացվեցին անմիջականորեն՝ Հայկական հարցի հետ կապված, երբ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ստորագրված նախ՝ Սան-Ստեֆանոյի, իսկ այնուհետև՝ Բեռլինի պայմանագրերով սուլթանի վրա պարտավորություն դրվեց բարենորոգումներ իրականացնել հայաբնակ տարածքներում և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից: Ըստ պայմանագրի՝ գործընթացը վերահսկվելու էր մեծ տերությունների կողմից, ինչը նշանակում էր, որ հայերի իրավունքների պաշտպանությունը արդեն ոչ թե կայսրության ներքին հարց է, այլ միջազգային հարաբերությունների ու միջազգային իրավունքի: Մարդասիրական միջամտության արդյունքում Օսմանյան կայսրության վրա դրված՝ Հայկական հարցի հետ կապված պարտավորությունների չկատարումը և Աբդուլ Համիդի կողմից 1894-1996 թթ. իրականացված արևմտահայերի զանգվածային կոտորածները հանգեցրին նրան, որ տերությունները կրկին անդրադարձան այդ հարցին: 1895 թ. մայիսին Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան Բարձր Դռանը ներկայացրին հուշագիր, որում անդրադարձ էր կատարվում Բեռլինի պայմանագրի համապատասխան հողվածին<sup>26</sup>: Նմանատիպ միջամտություն պետք է համարել նաև Կ.Պոլսում մեծ տերությունների դեսպանների և Բարձր Դռան միջև երկարատև բանակցություններից հետո 1914 թ. հունվարի 26-ին ստորագրված ռուս-թուրքական պայմանագիրը, որով կրկին նախատեսվում էր բարենորոգումներ իրականացնել հայաբնակ վիլայեթներում:

Բացի հիշատակված մարդասիրական միջամտություններից ու Օսմանյան կայսրության կողմից իր ստանձնած պայմանագրային պարտավորությունների խախտումներից, 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի միջազգային իրավունքում նույնպես ամրագրվել էին նորմեր, որոնք դատապարտելի էին համարում խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններն ու կոտորածները՝ դրանք որակելով որպես «մարդկության օրենքների» սկզբունքները խախտող գործողություններ: Այսպես՝ Հաագայում տեղի ունեցած 1899 թ. խաղաղության առաջին կոնֆերանսում ընդունված «Պատերազմի վարման օրենքների և սովորույթների մասին» **առաջին կոնվենցիայում** սահմանվել են «մարդկության» և «մարդկության օրենքների» սկզբունքները, որոնցով դատապարտվում էին խաղաղ բնակչության նկատմամբ բռնություններն ու կոտորածները<sup>27</sup>: Ավելին, 1907 թ. կայացած Հաագայի երկրորդ կոնֆերանսում ընդունված **չորրորդ կոնվենցիայի** հավելվածի երրորդ կետում ամրագրված էր, որ «պատերազմող կողմը պա-

25 Տե՛ս **Հակոբյան Դ.**, Հայրենիք վերադառնալու գաղափարը և ժամանակակից միջազգային իրավունքը, Եր., 2000, էջ 134:

26 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ.Կիրակոսյանի խմբ., Եր., 1972, էջ 131:

27 Տե՛ս **Սարուխանյան Տ.**, Հայոց ցեղասպանության միջազգային իրավական պատասխանատվությունը և Մեծ Բրիտանիան (1915-1923 թթ.), «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», N 5, Եր., 2002, էջ 77:

տասխանատու է իր զինված ուժերի կազմում գտնվող անձանց բոլոր գործողությունների համար»<sup>28</sup>:

Թերևս, հենց այս դրույթների վրա հենվելով, արդեն Հայոց ցեղասպանության ընթացքում՝ 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի տերությունները ընդունեցին համատեղ հայտարարություն, որով դատապարտում էին Օսմանյան կայսրության կողմից հայ բնակչության զանգվածային սպանությունները կայսրության ողջ տարածքում<sup>29</sup>: Համատեղ հռչակագրում հստակ բնորոշվում էր թուրքական կառավարության վերաբերմունքը հայերի զանգվածային կոտորածներին՝ ոչ միայն «թողտվության», այլև «ուղղակի օժանդակության» ձևով: Սկզբունքային նշանակություն ունեւր այն փաստի արձանագրումը, որ կատարվում են նոր հանցագործություններ, դրանով իսկ **առաջին** նշվում էր, որ հայերի զանգվածային ոչնչացման նախկին գործողությունները նույնպես եղել են հանցագործություններ և **երկրորդ** ընդգծվում էր հայերի նկատմամբ կատարված նոր հանցագործությունների կապը նախկինների հետ: Միջազգային իրավունքի տեսանկյունից այս հայտարարությունը նշանակալից է նրանով, որ Հայոց ցեղասպանությունը որակելով որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ» ուղղված հանցագործություն, **ինչը բովանդակային առումով նույնական է հետագայում ընդունված «գեոնոցիդ» հասկացությանը**, տվյալ միջազգային հանցագործության համար անձնական քրեական պատասխանատվությունը դնում էր թուրքական կառավարության և նրա տեղական ներկայացուցիչների բոլոր անդամների վրա: Սրանով իսկ հայտարարությունը միջազգային մասշտաբով սկիզբ դրեց ֆիզիկական անձանց անձնական պատասխանատվությանը, ընդ որում, այն բացահայտ և ոչ երկիմաստորեն մերժում էր «պետական գործողության» ուսմունքին հղում կատարելու հնարավորությունը, որի համաձայն պետական մարմինները վերագրվում են պետությանը, ինչը բացառում է ֆիզիկական անձանց անձնական պատասխանատվությունը, որոնք հանդիսանում են այդ գործողություններն իրականացնողները<sup>30</sup>:

1915 թ. մայիսի 24-ի հայտարարությունը, ըստ էության, միջազգային իրավունքի տեսակետից հստակ գնահատական էր Օսմանյան կայսրությունում կատարվող հայերի զանգվածային կոտորածներին և այս փաստաթղթի հրապարակումը՝ արդեն բուն կոտորածների ընթացքում, ևս մեկ վառ ապացույց է այն բանի, որ հայերի հետ կատարվածը համարվել է **հանցագործություն՝ համաձայն տվյալ պահին գործող միջազգային իրավական նորմերի**:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո կնքվեցին Վերսալի, ապա Սևրի հաշտության պայմանագրերը համապատասխանաբար՝ Գերմանիայի ու Թուրքիայի հետ, և դրանցում հստակորեն նշված էր, որ պետք է

28 Տե՛ս **Յովհաննիսյան Վ.**, Սևրի 1920 թ. օգոստոսի 10-ի հաշտության պայմանագիրը և հայոց պահանջատիրությունը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», գիտական զեկուցումների ժողովածու, էջ 20:

29 Տե՛ս Международные отношения в эпоху империализма. Документы из архивов Царского и Временного правительства. 1878-1917, М.-Л. 1931-1940, серия III, т. 7, ч. 2, стр. 252.

30 Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов. Под редакцией М. Нерсисяна, Ер., 1983, с. 280.

ստեղծվեն միջազգային դատական ատյաններ պատերազմական հանցագործներին դատելու համար<sup>31</sup>: Թերևս, սրանից վախենալով էր, որ Թուրքիան հապճեպ ձեռնարկեց երիտթուրքերի դատավարությունը՝ հայերի զանգվածային սպանությունների պատասխանատվությունը բարդելով միայն «Միություն և առաջադիմություն» կուսակցության ու նրա առաջնորդների վրա և փորձելով խուսափել թուրքական պետության պատասխանատվությունից, ինչը միանշանակ կարող էր ծագել միջազգային ատյանում նման դատավարություն սկսելու պարագայում:

**Այսպիսով, հայերի զանգվածային սպանությունները, անկախ «գեոցիո» տերմինի կիրառումից, համարվել են հանցագործություն՝ համաձայն մինչև Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության ընթացքում և դրանից հետո գործող միջազգային իրավունքի նորմերի: Ուստի ներկայումս գործող միջազգային իրավական նորմերը թույլ են տալիս հենվել հենց ցեղասպանության կատարման պահին գործող նորմերի վրա և համապատասխան գնահատական տալ 20-րդ դարում կատարված հանցագործությանը:**

2. Վերը քննարկված հարցի հետ սերտորեն առնչվում է Հայոց ցեղասպանության նկատմամբ ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի կիրառելիությունը, այսինքն՝ Հայոց ցեղասպանության վաղեմության ժամկետի և կոնվենցիայի հետադարձ ուժի հետ կապված հարցերը: Այս հարցը չափազանց կարևոր է, քանզի թուրք «մասնագետները», մասնավորապես տխրահռչակ «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի» նախկին անդամ Գյունդուզ Աքթանը պնդում էին, որ 1948 թ. ընդունված ՄԱԿ-ի կոնվենցիան չի կարող հետադարձ ուժ ունենալ և վերաբերել 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության տարածքում տեղի ունեցած իրադարձություններին<sup>32</sup>: ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի Հայոց ցեղասպանության նկատմամբ հետադարձ ուժ ունենալու հարցին անդրադարձել են նաև հայ և օտարազգի հեղինակավոր գիտնականներ Շ. Թորիկյանը, Յու. Բարսեղովը, Ա. դե Չայասը և ուրիշներ, որոնք իրենց աշխատություններում հիմնավորել են կոնվենցիայի հետադարձ ուժ ունենալու հանգամանքը:

Այս առումով պետք է նշել, որ 1948 թ. կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ փաստաթղթի մեկնաբանման և դրա հետ կապված վեճերի քննարկման իրավասությունը հանձնվել է ՄԱԿ-ի միջազգային արդարադատության դատարանին<sup>33</sup>: Այս հանգամանքի հիման վրա տեսակետ է առաջ քաշվում, որ 1948 թ. կոնվենցիայի հետադարձ ուժի կիրառման հարցը նույնպես նշված դատարանի որոշելիք խնդիրն է<sup>34</sup>: Չպետք է մոռանալ, սակայն, որ դատարանի այդ իրավասությունը կոնվենցիայում ամրագրվել

31 Տե՛ս **Չովհաննիսյան Վ.**, նշվ. հոդվ., էջ 20:

32 Տե՛ս **Барсегов Ю.** Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 51.

33 Տե՛ս **Права человека.** Сборник международных договоров, т. 1, ч.2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 1994, с. 782.

34 Տե՛ս **Մարգարյան Վ.**, Հայերի դեմ իրագործած ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետության միջազգային իրավական պատասխանատվության հիմքերը, եղանակները, ձևերը և տեսակները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N 1 (17), Եր., 2006, էջ 25:

է 1948 թ. դրությամբ, որը ուժի մեջ է մտել 1951 թ.: Սակայն դրանից հետո միջազգային իրավունքը շարունակել է զարգանալ՝ տվյալ ոլորտում ընդունելով նոր փաստաթղթեր:

1948 թ. կոնվենցիայի ընդունումից 20 տարի անց՝ 1968 թ. նոյեմբերի 26-ին, ՄԱԿ-ը ընդունել է նաև մեկ այլ կոնվենցիա՝ «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին»: Այստեղ պայմանավորվող կողմերը ընդգծում են, որ «պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար պատասխանատվության կանչելու կամ պատժելու վերաբերյալ առկա որևէ հռչակագրում, ակտում կամ կոնվենցիայում նախատեսված չէ վաղեմության մասին դրույթ»<sup>35</sup>: Ավելին, նրանում ընդգծվում է, որ տվյալ կոնվենցիայով միջազգային իրավունքում համընդհանուր կիրառության մեջ է մտնում «այն սկզբունքը, համաձայն որի պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների համար գոյություն չունի վաղեմության ժամկետ»<sup>36</sup>: 1968 թ. կոնվենցիայի հենց առաջին հոդվածում հստակորեն նշված է այն պարտադիր դրույթը, որ «անկախ կատարման ժամկետից (ընդգծումը մերն է-Ա.Մ.), պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում»<sup>37</sup>:

Այսպիսով, ընդգծելով, որ վերը նշված հանցագործությունների նկատմամբ նախկինում որևէ միջազգային փաստաթղթում գոյություն չի ունեցել վաղեմության ժամկետի մասին դրույթ, ինչպես նաև, հաշվի առնելով այդ հանցագործությունների՝ միջազգային իրավունքի տեսակետից առանձնապես ծանր լինելու հանգամանքը, ՄԱԿ-ը սույն կոնվենցիայով միջազգային իրավունքում շրջանառության մեջ է դրել պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու սկզբունքը:

1968 թ. կոնվենցիան նաև պարզաբանումներ է տալիս այն հարցի հետ կապված, թե ինչ է հասկացվում «պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ կատարված հանցագործություններ» անվան տակ: Համաձայն կոնվենցիայի երկրորդ հոդվածի՝ «մարդկության դեմ կատարված հանցագործություն է համարվում նաև ցեղասպանության հանցագործությունը, որը սահմանվել է ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայով, նույնիսկ եթե այդ գործողությունները այն երկրում, որտեղ կատարվել են, չեն համարվում ներքին օրենսդրության խախտում»<sup>38</sup>: Եթե հաշվի չառնենք նախկին երիտթուրքական կառավարության անդամների 1919 թ. դատավարության պատրանքը թուրքական ռազմական տրիբունալում, ապա կարելի է պնդել, որ կոնվենցիայի սույն հոդվածը անմիջականորեն և այն էլ՝ կրկնակի հիմքերով վերաբերում է հենց Թուրքիային: Պատճառն այն է, որ ցեղասպա-

35 Տե՛ս Права человека. Сборник международных договоров, т. 1, ч.2, Универсальные договоры ООН, с. 786.

36 Տե՛ս նույն տեղում, статья I.

37 Տե՛ս նույն տեղում:

38 Տե՛ս Права человека. Сборник международных договоров, т. 1, ч.2, Универсальные договоры ООН, статья I, пункт b, с. 787.



նության նկատմամբ վաղեմության ժամկետը չկիրառելու դրույթի առկայության հետ միասին՝ Թուրքիան նաև մարդկության դեմ հանցագործություն կատարած Օսմանյան կայսրության իրավաժառանգորդն է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի 1968 թ. կոնվենցիան ուղղակիորեն հղում է կատարում 1948 թ. կոնվենցիայի վրա, միաժամանակ կարելի է արձանագրել, որ **առաջինը** փաստորեն **երկրորդի** լրացումն ու շարունակությունն է, և կարելի է փաստել, որ այս նոր կոնվենցիայով ՄԱԿ-ն, ըստ ամենայնի, փորձել է հստակեցնել 1948 թ. կոնվենցիայի կիրառման և նրա հետադարձ ուժ ունենալու հարցը:

**Այնպես որ, եթե անգամ ընդունենք, որ 1948 թ. կոնվենցիայի 9-րդ հոդվածով տվյալ փաստաթղթի մեկնաբանման, այսինքն՝ նաև դրա հետադարձ ուժի կիրառման հարցի լուծման իրավասությունը պատկանում է ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին, այդուհանդերձ միանշանակ է, որ դատարանը տվյալ հարցում որոշում կայացնելիս չի կարող անտեսել կամ շրջանցել ՄԱԿ-ի 1968 թ. կոնվենցիայի վերը նշված դրույթները:**

3. Թուրքիայի Հանրապետության՝ Հայոց ցեղասպանությունն իրականացրած Օսմանյան կայսրության իրավահաջորդը լինելու փաստի իրավական հիմնավորումը կարևոր է այն առումով, որ հնարավորություն ընձեռնվի Օսմանյան կայսրության չգոյության պայմաններում տվյալ հանցագործության համար պատասխանատվությունը տեղափոխել ժամանակակից Թուրքիայի վրա:

Միջազգային իրավունքի տեսության համաձայն՝ իրավահաջորդության հստակեցումը կապված է այն հարցի հետ, թե նոր առաջացած պետությունը արդյո՞ք պահպանում է նախորդ պետության գլխավոր հատկանիշերը՝ պատմական կապը, հիմնական բնակչությունը, նրա ազգային ծագումը, լեզուն, կառավարման եղանակը և այլ բնութագրիչներ: Եթե պատասխանը դրական է, ուրեմն այդ դեպքում գործ ունենք ոչ թե նոր առաջացած պետության, այլ նախորդ պետության իրավահաջորդի հետ<sup>39</sup>: Ելնելով այս դրույթներից, ակնհայտ է դառնում, որ թուրքերը իշխել են Օսմանյան կայսրության ժամանակ, և այդ տիրապետումը փոխանցվել է նաև ժամանակակից Թուրքիային, ընդ որում, այդ նույն ժողովուրդը պահպանել է Օսմանյան կայսրության ժամանակ ունեցած իր ավանդույթները և լեզուն: Ավելին, ինչպես հայտնի է, երիտթուրքերից շատերը հետագայում դարձան քենալական շարժման ղեկավարներ, և անկախ կառավարման եղանակից, հանրապետական կարգերի պարագայում, ինչպես և Օսմանյան կայսրության ժամանակ շարունակվեց թուրք ժողովրդի իշխանությունը տվյալ տարածքի վրա: **Ուստի ակնհայտ է, որ ի դեմս Թուրքիայի մենք գործ ունենք Օսմանյան կայսրության իրավահաջորդի հետ:**

Թուրքիայի՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդ լինելու հարցը գործնականում առաջադրվել է 1923 թ. Լոզանի կոնֆերանսից հետո, երբ քննարկվում էր նախկին Օսմանյան կայսրության պարտքի հարցը: Խնդիր էր դրված պարզել, թե այդ պետության չգոյության պայմաններում ո՞վ պետք է ստանձնի պարտքի վճարման պարտավորությունը: Բայց, չնայած

39 Տե՛ս **Թորիկեան Շ.**, Հայկական հարցը եւ միջազգային օրենքը, էջ 193:

թուրքական փաստարկներին, միջազգային իրավարար Բորելը վճռեց, որ ըստ միջազգային իրավունքի՝ Թուրքիան է հանդիսանում Օսմանյան կայսրության իրավահաջորդը, ուստի հենց նա էլ պետք է վճարի Օսմանյան կայսրության պարտքը<sup>40</sup>: Այս վճռի հիման վրա Թուրքիան ստանձնեց Օսմանյան կայսրության պարտքի վճարման պարտավորությունը: Ու չնայած հսկայական զիջումներին, Թուրքիայի Հանրապետությունը Օսմանյան կայսրության պարտքը կարողացավ փակել միայն 1944 թ. հունիսին<sup>41</sup>: Այն փաստը, որ Թուրքիան մինչև 1944 թ. վճարել է Լոզանի պայմանագրով սահմանված՝ Օսմանյան կայսրության պարտքը, վերջնականապես հաստատում է Թուրքիայի՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդը լինելու հանգամանքը:

Գոյություն ունի թյուր կարծիք, թե Թուրքիան ճանաչվել է Օսմանյան կայսրության իրավահաջորդ միայն մասնակիորեն՝ բացառապես օսմանյան պարտքի մասով: Մինչդեռ իրավարար Բորելը չէր կարող որոշել օսմանյան պարտքի ճակատագրի հարցը, չպարզելով, թե որ<sup>օ</sup> երկիրն է հանդիսանում գոյություն չունեցող Օսմանյան կայսրության իրավահաջորդը: Ու թեև քաղաքական տեսակետից, բացի այլ գործոններից նաև օսմանյան պարտքի մարման հարցն է հանգեցրել նրան, որ Թուրքիան ճանաչվի Օսմանյան կայսրության իրավահաջորդ, այդուհանդերձ, իրավական տեսակետից, օսմանյան պարտքի մարելու հանգամանքը Թուրքիայի իրավահաջորդության ոչ թե պատճառ է, այլ հետևանք: Ուստի իրավարար Բորելը նախ՝ Օսմանյան կայսրության իրավահաջորդ է ճանաչել միայն Թուրքիան, որից տրամաբանորեն հետևում էր, որ հենց իրավահաջորդ Թուրքիան էլ պետք է վճարի նախկին օսմանյան պարտքերը: Այնպես որ, տվյալ դեպքում տեղին է խոսել ոչ թե մասնակի, այլ ամբողջական իրավահաջորդության մասին, քանզի Թուրքիայի իրավահաջորդության հարցի լուծումը վերաբերում է ոչ միայն օսմանյան պարտքի մարման պարտավորությանը, այլև կայսրության կողմից գործված սխալների համար միջազգային պատասխանատվությանը<sup>42</sup>:

Այսպիսով, Թուրքիան արդեն իսկ ճանաչվել է որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ և որպես այդպիսին կատարել է իր նախորդի պարտավորությունները, ուստի նա պատասխանատու է նաև իր նախորդի կողմից կատարած հանցագործությունների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության համար:

4. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման իմաստով կարևոր է նաև Հայաստանի երրորդ Հանրապետության կողմից ժամանակակից Թուրքիային միջազգային-իրավական պահանջներ ներկայացնելու կամ միջազգային դատական ատյաններում որպես հայցվոր կողմ հանդես գալու իրավունքի հարցի հստակեցումը:

Համաձայն գործող միջազգային իրավական համակարգի ու գոյություն ունեցող նորմերի՝ միջազգային իրավունքի սուբյեկտներ հիմնականում

40 Տե՛ս նույն տեղում, էջ 195:

41 Տե՛ս **Դադայան Խ.**, Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը և ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործական միջազգային գիտաժողով), էջ 179:

42 Տե՛ս **Թորիկեան Շ.**, Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, էջ 195:

հանդիսանում են միջազգայնորեն ճանաչված պետությունները, որոնք օժտված են սուվերենությամբ<sup>43</sup>: Հասկանալի է, որ հայկական Սփյուռք օժտված չէ սուվերենությամբ (ինքնիշխանությամբ), ուստի չի կարող դիտվել իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ և հետևաբար որպես պահանջատեր՝ հանդես գալ որևէ միջազգային ատյանում:

Հայաստանի Հանրապետությունը, սակայն, կարող է ներկայացնել ու պաշտպանել միայն Հայոց ցեղասպանության այն գոհերի ու վերապրածների ժառանգների շահերն ու իրավունքները, որոնք հանդիսանում են իր քաղաքացիները: Ինչ վերաբերում է արևմտահայերի շահերի ներկայացմանն ու պաշտպանությանը, ապա Հայաստանի Հանրապետությունը կարող է ստանձնել այդ իրավունքը այն դեպքում, եթե արևմտահայերի լիազոր մարմինը օժտել է նրան նման իրավունքով:

Այս իմաստով պետք է նշել, որ Արևմտահայերի Երկրորդ համագումարը դեռևս 1919 թ. օժտել է Հայաստանի առաջին Հանրապետությանը նման իրավունքով: 1919 թ. փետրվարի 12-ին համագումարի ընդունած «Քաղաքական բանաձևի» 5-րդ կետի համաձայն՝ արևմտահայերի Գործադիր մարմինը Արարատյան Հանրապետության կառավարության և պառլամենտի հետ միասին պետք է ձեռնարկեր իրական քայլեր Միացյալ, Ազատ Հայաստանի հռչակման ուղղությամբ<sup>44</sup>: Այս ձևակերպումով արևմտահայերի իրավասու մարմինը փաստորեն լիազորում էր Հայաստանի առաջին Հանրապետությանը, որի իրավահաջորդն այսօր հանդիսանում է ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, հանդես գալ նաև իր անունից իբրև պահանջատեր կողմ, քանզի Միացյալ, Ազատ Հայաստանի հռչակումն անպայմանորեն ենթադրում էր Հայոց պահանջատիրությունը: Սակայն միևնույն ժամանակ, օժտելով հանդերձ Հայաստանին նման իրավունքով, արևմտահայերի համագումարն ընդգծում էր այս ուղղությամբ միասին ու համատեղ աշխատելու կարևորագույն հանգամանքը: Այս դրույթը խիստ արդիական է նաև այսօր, քանզի այն ենթադրում է թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում:

**«Հայոց ցեղասպանության հետևանքների և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հիմնավորման պատմաիրավական փաթեթը»** (այսուհետ՝ **Պահանջների փաթեթ**) Հայաստանի և Սփյուռքի կողմից միասնաբար մշակելու հանգամանքը կարևոր է այնքանով, որ ցեղասպանության հետևանքների և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հարցում կձևավորվի միասնական մոտեցում, որից այլևս չի կարող լինել շեղում: Այդպիսով կբացառվեն Հայոց ցեղասպանության հետևանքների և ներկայացվելիք պահանջների հետ կապված տարաբնույթ մեկնաբանություններն ու շահարկումները՝ տարբեր կառույցների և առանձին անհատների կողմից: Հարկավոր է քաջ գիտակցել, որ այս հարցում ցանկացած ինքնազործունեություն կամ մոտեցումների տարբերություններ անպայման օգտագործվելու են մեր դեմ՝ նպատակ ունենալով տարածայնություններ

43 Տե՛ս Նույն տեղում, էջ 197:

44 Տե՛ս **Մելիքյան Վ.**, Արևմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Եր., 2007, էջ 10:

մտցնել հայ ժողովրդի հատվածների միջև և շեղել ճիշտ ճանապարհից:

Կարծում ենք՝ Հայաստանի Հանրապետությունը «Պահանջների փաթեթին» պետք է տա օրենքի կարգավիճակ, որպեսզի քաղաքական կոնյունկտուրայի փոփոխությունից անկախ, երկրի արտաքին քաղաքականության մեջ այս ուղեծրից ոչ մի շեղում չկատարվի: Տվյալ քայլի նպատակը պետք է լինի այն, որ օրենսդրորեն արգելվի որևէ գործողություն, առավել ևս՝ որևէ փաստաթղթի ստորագրում, որը կլինի շեղում ընդունված «Պահանջների փաթեթից»: Համապատասխան օրենքի ընդունումից հետո «Պահանջների փաթեթը» լինելու է բաց և հրապարակային փաստաթուղթ, լայնորեն տարածվելու է հայության շրջանում և աշխարհով մեկ:

Ռազմավարական այս փաստաթղթի հիման վրա՝ Սփյուռքի ու Հայաստանի համապատասխան կառույցների ու մասնագետների համատեղ ջանքերով պետք է մշակվի նաև մարտավարական, կիրառական փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հայեցակարգը» (այսուհետ՝ **Հայեցակարգ**): Հայեցակարգում մատնանշվելու են այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով հնարավոր է լինելու հասնել վերը նշված հետևանքների հաղթահարմանը: Այս փաստաթուղթն, ի տարբերություն առաջինի, լինելու է փակ, սահմանափակ օգտագործման համար նախատեսված՝ թույլ չտալու համար, որ հակառակորդը, նախապես իմանալով, հնարավորություն ստանա կանխարգելիչ քայլերով չեզոքացնել իր համար անբարենպաստ հետևանքները:

Հայեցակարգի կարևորագույն հիմնախնդիրներից մեկը պետք է դառնա կատարվելիք աշխատանքների բաժանումը Հայաստանի և Սփյուռքի միջև, ելնելով նրանց իրավասություններից, կարողություններից ու փորձառությունից: Ճիշտ այնպես, ինչպես հրեական Հոլոքոստի հատուցման գործընթացում հստակ դերաբաժանում էր կատարվել Իսրայելի ու սիոնիստական կազմակերպությունների միջև, նույն կերպ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում պետք է հստակեցվի, թե ի՞նչ է անելու Հայաստանը և ի՞նչ խնդիրներ են դրվելու Սփյուռքի վրա: Նման դերաբաշխումը թույլ կտա գործընթացները համակարգել մեկ կենտրոնից, այսինքն՝ արդյունավետ օգտագործել եղած ռեսուրսները և խուսափել գործողությունների կրկնություններից, ինչը ավելի շուտ վնաս է տալիս, քան օգուտ: Հայեցակարգի ընդունումից հետո պետք է ուղղակիորեն բացառվի ցանկացած անձնական նախաձեռնություն կամ ինքնագործունեություն, քանզի իրենց անձնական պահանջները և շահերը առաջ մղելով՝ ցեղասպանության գոհերի ժառանգները, երբեմն անձնական նախաձեռնություններով ցանկանալով վերականգնել սեփական իրավունքները իրենց հայրական կամ պապենական կալվածքների նկատմամբ, կարող են վնասել ընդհանուր գործին: Իսկ Թուրքիան դա կարող է շահարկել՝ ասելով, թե հատուցել է հայերի նյութական կորուստները<sup>45</sup>: Ուրեմն նման գործողությունները պետք է ընթանան միայն ու միայն ընդհանուր նյութական պահանջների շրջանակներում:

45 Տե՛ս Դայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, էջ 81:

#### 4. Աշխատանքների ուղղությունները

Հայեցակարգում նաև պետք է հստակեցվեն այն հիմնական ուղղությունները, որոնցով պետք է տարվեն աշխատանքները: Մեր կարծիքով՝ դրանք զուգահեռաբար պետք է ընթանան թե՛ իրավական և թե՛ քաղաքական հարթությունների վրա:

**Իրավական ուղղություն:** Հայաստանը՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, հիմնվելով թե՛ ՄԱԿ-ի կանոնադրության և թե՛ անմիջականորեն՝ Յեղասպանության կոնվենցիայի դրույթների վրա, կարող է դիմել միջազգային դատական ատյաններին՝ իր ու Թուրքիայի միջև առկա վեճը լուծելու, կոնկրետ հարցերի, օրինակ՝ կոնվենցիայի դրույթների մեկնաբանման ու կիրառման կամ էլ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի օրինականության և վավերականության հետ կապված խորհրդատվական եզրակացություն տալու խնդրանքով: Սակայն այստեղ ծագում են նաև միջազգային դատական ատյանների՝ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի, Միջազգային քրեական դատարանի, Ռուսոնդայի, նախկին Հարավսլավիայի ad hoc դատարանների կամ միջազգային արբիտրաժի իրավասությունների և ընդհանրապես՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում դրանց դիմելու նպատակահարմարությունը պարզելու հարցերը:

Բացի այդ՝ լուրջ խնդիր է Յեղասպանության կոնվենցիայի կատարելագործման հարցը: 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Յեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի բացերի ու թերությունների շտկումը թույլ կտա ավելի արդյունավետ օգտագործել այդ կարևոր միջազգային իրավական գործիքը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար: Ակնհայտ է, որ ավելի քան 60 տարի առաջ՝ «սառը պատերազմի» տարիներին, ԽՍՀՄ-ի ու ԱՄՆ-ի միջև առճակատման պայմաններում ընդունված կոնվենցիան չի համապատասխանում արդի միջազգային հարաբերությունների ու միջազգային իրավունքի պահանջներին: Ավելին, կոնվենցիան չի կատարում իր գլխավոր առաքելությունը՝ ցեղասպանության հանցագործության կանխարգելումը, քանզի փաստաթուղթը ուժի մեջ մտնելուց հետո էլ արձանագրվել են նման հանցագործության բազմաթիվ դեպքեր:

Էլ չենք խոսում այն մասին, որ Յեղասպանության կոնվենցիայի տարբեր դրույթների անորոշությունը տեղիք է տալիս տարաբնույթ մեկնաբանությունների: Այդ իսկ պատճառով Հայաստանը՝ որպես կոնվենցիայի մասնակից պետություն, հիմնվելով փաստաթղթով իրեն ընձեռված իրավունքների վրա, կարող է հանդես գալ փոփոխություններով ու լրացումներով՝ առաջարկելով փաստաթղթում ամրագրել հետևյալ դրույթները՝ ա) արգելել ցեղասպանություն քարոզելը և ցեղասպանությունը ժխտելը, ռասայական, ազգային ու կրոնական թշնամանք տարածող կազմակերպությունների գործունեությունը, ցեղասպանության գոհ-խմբի հայրենի տարածքի տնօրինումը («պատրիոցիդ») և ցեղասպանության հանցագործության նյութական պտուղներից օգտվելը, բ) ամրագրել ցեղասպանության գործերով բացառապես միջազգային դատարանի իրավասությունը, Յեղասպանության կոնվենցիայի մեջ ներառել նաև ազգային-մշակութային ցեղասպանությունը, գ) ֆիզիկական անձանց պատասխանատվությանը զուգահեռ՝ հստակեցնել նաև պետությունների պատասխանատվության հարցն այն իմաստով, որ պե-

տությունները պարտավորվեն քայլեր ձեռնարկել գոհ-խմբի նկատմամբ ցեղասպանության հետևանքների վերացման ուղղությամբ՝ հիմնվելով միջազգային իրավունքի նորմերի ու միջազգային պրակտիկայի վրա:

Կարծում ենք՝ միջազգային իրավունքում պետությունների պատասխանատվության ինստիտուտի հստակ ամրագրման նպատակով Հայաստանը պետք է ակտիվացնի իր գործակցությունը ՄԱԿ-ի «Միջազգային իրավունքի հանձնաժողովի» հետ, որի շուրջ 50 տարվա աշխատանքի արդյունքում ստեղծված «Միջազգային հակաիրավական արարքների համար պետությունների պատասխանատվության մասին» փաստաթուղթը հավանության արժանացավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2001 թ. դեկտեմբերի 12-ին ընդունած 56/83 բանաձևով<sup>46</sup>: Դժվար չէ նկատել, որ «միջազգային հանցագործության» փոխարեն այս փաստաթղթում կիրառվել է «միջազգային հակաիրավական արարք» ձևակերպումը, փորձելով չքրեականացնել միջազգային իրավունքի նորմեր ստեղծող սուբյեկտներին՝ պետություններին: Այդ փաստաթղթի համաձայն՝ ցեղասպանության հանցագործությունը որակվում է իբրև ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերից բխող պարտավորությունների լուրջ խախտում, ինչն, անշուշտ, ենթադրում է նաև պատասխանատվություն: Ցավոք, սա այս ուղղությամբ ընդունված դեռևս միակ փաստաթուղթն է, ուստի Հայաստանը՝ որպես շահագրգիռ կողմ, այստեղ դեռ շատ անելիքներ ունի:

Բոլոր դեպքերում, չպետք է մոռանալ **էստուպելի** սկզբունքի մասին և անընդհատ հարցը պահել Հայաստանի և Սփյուռքի օրակարգում, որպեսզի ոչ ոք չկարողանա պնդել, թե Հայաստանը կամ հայերը իրենց գործողություններով կամ անգործությամբ հաշտվել են ստեղծված իրողության հետ և կորցրել են ժամկետները և այդպիսով՝ զրկվել են Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցը միջազգային ատյաններում բարձրացնելու իրենց իրավունքից:

Ինչպես տեսնում ենք, հարցը միջազգային իրավական տեսակետից բարձրացնելու առումով բավական հնարավորություններ կան: Սակայն պետք է լուրջ ուշադրություն դարձնել նաև նման գործընթացի թե՛ մարտավարական և թե՛ ռազմավարական կողմերին այն առումով, թե ինչը ինչից հետո պետք է կատարվի, որպեսզի աշխատանքների արդյունավետությունը լինի ավելի բարձր, և խուսափենք ժամանակի ու ջանքերի անիմաստ կորուստներից:

**Քաղաքական ուղղություն:** Գաղտնիք չէ, որ միջազգային իրավունքի և հատկապես նրա նորմերի կիրառման վրա որոշակի ազդեցություն ունեն աշխարհաքաղաքական զարգացումները, տարածաշրջանային գործընթացները, միջազգային հարաբերություններում ուժերի ու շահերի վերադասավորումները և այլն: Այդ իսկ պատճառով Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման միջազգային իրավական գործընթացը պետք է լրջորեն նախապատրաստված ու ապահովագրված լինի դրան նախորդող ու դրա հետ գուգահեռ շարունակվող քաղաքական գործընթացով: Քաղաքական գործընթացն, անշուշտ, իր մեջ պետք է պարունակի **գիտական և քարոզչական բաղադրիչներ**:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման քաղաքականությունը կարող է ենթադրել հետևյալ գործողությունները.

<sup>46</sup> **Վարդանյան Վ.**, Ցեղասպանության համար պետությունների միջազգային իրավական պատասխանատվության արդի միտումներն ու զարգացումները, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», էջ 52:

ՀԻՄՆԱԲԱՐՆԵՐ  
Գ (Ժ) ԳՐԱԿԻ ՔԻՂ 2 (38) ԱՊՐԻԼ-ԻՈՒՆԻՍ, 2012  
ՎԵՄ համահայկական հանդես

1. Աշխատանք Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրների ու միջազգային կազմակերպությունների հետ՝ այն իմաստով, որ ուսուցիչները և նրանց կողմից ընդունված բանաձևերն ու որոշումները: Անհրաժեշտ է, որ այդ երկրներն ու կառույցներն իրենց քաղաքականությամբ սատարեն Հայաստանին, երբ հասունանա հարցը միջազգային դատական ատյաններում բարձրացնելու պահը: Եվրոպական որոշ երկրների կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը օրենսդրորեն քրեականացնելու նախադեպերը եվրոպական մյուս պետությունների հայկական համայնքները պետք է աշխատեն տարածել նաև իրենց երկրների վրա: Այս առումով նպաստավոր է այն հանգամանքը, որ Եվրոմիության անդամ երկրները, 2008 թ. նոյեմբերի 28-ին ստորագրելով «Ռասիզմի և սյլատյացության որոշ տեսակների և դրսևորումների դեմ քրեական պատիժներ սահմանելու միջոցով պայքարելու մասին» շրջանակային համաձայնագիրը, պարտավորություն են ստանձնել իրենց օրենսդրությունը համապատասխանեցնել նրա դրույթներին:

2. Հայաստանը և Մփյուռքը համատեղ ջանքերով պետք հասնեն նրան, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը անպայմանորեն ներառված լինի Թուրքիա-Եվրամիություն բանակցությունների օրակարգում: Հայաստանը և Մփյուռքը պետք է փորձեն միջազգային հարաբերությունների ակտիվ դերակատարների հետ Թուրքիայի ունեցած հակասություններն ու տարածայնությունները ծառայեցնել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացին, ճիշտ այնպես, ինչպես Օսմանյան կայսրությունը և հետո էլ Թուրքիան մեծ տերությունների միջև եղած հակասություններն օգտագործեցին Հայկական հարցը օրակարգից հանելու համար:

3. Հայաստանը կարող է դիմել Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրներին, որպեսզի նրանք պարտադրեն Թուրքիային կատարելու այդ պայմանագրի 37-44-րդ հոդվածներով ստանձնած պարտավորությունները՝ ոչ մահմեդական բնակչության իրավունքները պաշտպանելու առումով: Մասնավորապես, Թուրքիայի հայկական համայնքի ունեզրկման հերթական դրսևորում պետք է համարել այդ երկրի Գերագույն դատարանի 1974 թ. որոշումը՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անշարժ գույքը առգրավելու և պետական գանձարան փոխանցելու մասին, ինչը Լոզանի պայմանագրի դրույթների կոպիտ խախտում է: Թերևս այս հանգամանքը ստիպեց Թուրքիայի նախագահ Ա.Գյուլին 2008 թ. փետրվարի 26-ին հաստատելու Ազգային մեծ ժողովի կողմից մեծ դժվարությամբ ընդունված՝ «Համայնքային կալվածքների մասին» օրենքը, համաձայն որի պետությունը 18 ամիսների ընթացքում պետք է վերադարձնեն ոչ մահմեդական համայնքների ու մասնավորապես՝ հայերի գույքը<sup>47</sup>: Սակայն անգամ օրենքի ընդունումից հետո էլ գործնականում դեռևս ոչինչ չի արվել, հայ համայնքը շարունակում է նյութական կորուստներ կրել, իսկ հարցը շարունակում է մնալ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում, որը պահանջում է Թուրքիայից՝ հարգել ոչ մահմեդական փոքրամասնությունների շահերն ու իրավունքները:

4. Պետք է նախապատրաստական աշխատանքներ տարվեն նաև այն ժողովուրդների շրջանում, ովքեր ենթարկվել են ցեղասպանության՝ ընդհանրապես և Օսմանյան կայսրության ու նրա իրավահաջորդ Թուրքիայի կողմից՝ մասնավոր-

47 **Ղաղայան Խ.**, Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը՝ ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», էջ 185:

րապես, ինչը թույլ կտա միջազգային կառույցներում ձևավորել այդ հանցագործությունից տուժած ժողովուրդների ընդհանուր դաշինք: Օրինակ՝ կարելի է ստեղծել Օսմանյան կայսրության և նրա իրավահաջորդ Թուրքիայի կողմից ցեղասպանության ենթարկված ժողովուրդների միասնական ճակատ, որի մեջ, հայերից գատ, կարող են ընդգրկված լինել հույները, ասորիները, արաբները, ինչու չէ՝ քրդերը և այլն, ինչը զգալիորեն կբարձրացնի տարվող պայքարի արդյունավետությունը և հաջողության հասնելու հավանականությունը:

5. Այն երկրներում, որոնք դեռևս չեն ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությունը, հարկավոր է ստեղծել ու տարածել հանրամատչելի տեղեկատվական բուկլետներ, բրոշուրներ՝ տարբեր լեզուներով: Գերադասելի է դա անել Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով, որպեսզի գործին տրվի պաշտոնական բնույթ: Նույնը պետք է արվի նաև էլեկտրոնային լրատվական միջոցների և համացանցի միջոցով: Այդ երկրներում հարկավոր է ստեղծել բարենպաստ հասարակական կարծիք Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար: Այս գործողությունների թիրախը պետք է դառնան հիմնահարցին անտեղյակ կամ թուրքական ժխտողական քարոզչության միջոցով ապակողմնորոշված զանգվածները, որոնց հանրամատչելի և անառարկելի ձևով պետք է ներկայացվի պատմական ճշմարտությունը: Աշխատանքներ պետք է տարվեն նաև այդ երկրների գիտական շրջանների հետ: Մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության տարբեր հիմնահարցերի շուրջ կարելի է հրավիրել միջազգային գիտաժողովներ՝ տվյալ երկրների գիտնականների մասնակցությամբ, իսկ գիտաժողովի նյութերը թարգմանել տարբեր լեզուներով ու տարածել: Գիտաժողովների արդյունքում պետք է ընդունվեն բանաձևեր՝ ուղղված ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին, Հայոց ցեղասպանությունը դեռևս չճանաչած երկրների ու հատկապես Թուրքիայի նախագահին:

**Ամփոփելով** նշենք, որ չնայած կատարված հսկայական աշխատանքին, դեռևս բավականին շատ անելիքներ կան: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանն ուղղված աշխատանքները պետք է կատարենք միասնաբար ու հետևողականորեն՝ ճիշտ օգտագործելով եղած ռեսուրսները և հաշվենկատորեն օգտվելով ընձեռված միջազգային իրավական ու քաղաքական հնարավորություններից: Անշուշտ, նման ճանապարհը դյուրին չի լինելու, կան լուրջ խոչընդոտներ ու դժվարություններ, բայց դրանք հաղթահարելի են, եթե մեր արդար դատը մինչև վերջ տանելու կամք և վճռականություն ունենանք:

Հեռու չէ Հայոց ցեղասպանության 100-ամյակը, ուստի հապաղելու, առավել ևս՝ սխալվելու իրավունք չունենք: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը միայն հայության իրավունքների վերականգնումն ու անվտանգության ապահովումը չէ: Չմոռանանք, որ դա նաև մեր սրբազան պարտքն է անմեղ զոհերի հիշատակի առաջ:



## Summary

# **THE ISSUE OF OVERCOMING THE CONSEQUENCES OF THE ARMENIAN GENOCIDE**

## Outlines of Legal and Political Substantiations

Armen Ts. Marukyan

Until today, in the struggle for the international recognition of the Armenian Genocide, the Armenian people have only been able to secure the adoption of resolutions recognizing or condemning the Armenian Genocide by the parliaments of different countries or international organizations. It is important to note, however, that this strategy is no longer productive because it cannot guarantee the final resolution of the issue. For this very reason, it is necessary to change the strategy and moving forward, take the struggle toward the issue of overcoming the consequences of the Armenian Genocide, which in and of itself assumes not only the recognition and condemnation of the Armenian Genocide, but also restitution for the crime committed, which is probably the most important issue and without which recognition and condemnation become meaningless. Prior to taking any steps in this regard, corresponding Armenian and Diasporan structures and experts must first of all create the first large strategic document, 'The consequences of the Armenian Genocide and the historical-legal basis of the package of demands to be presented to Turkey,' where it will be clearly registered what the Armenian people understand by saying the consequences of the Armenian Genocide and which demands they are preparing to present to Turkey. Based on the package of demands that will be developed including also the strategic application of the document, 'Concept for overcoming the consequences of the Armenian Genocide,' where the methods and mechanisms will be outlined, which will make it possible to achieve the eradication of the abovementioned consequences. Differing from the Package of Demands, the Concept must not be public, but rather it should be closed, with limited utilization in order not to have previous knowledge of the contents to prevent any of the steps to be taken in this regard.